

ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության  
ամբիոնի ասպիրանտ

**ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Սույն հոդվածը վերաբերում է վնասի հատուցման սահմանադրական իրավունքին: Փորձ է արվել բացահայտել հիմնական իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը և ներկայացնել դրա կապված լինելը հանրային իշխանության և անձանց միջև ծագող իրավական կապի էությանը՝ հաշվի առնելով այս հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած պրակտիկան:

*Հիմնաբառեր- պաշտպանության միջոց ունենալու իրավունք, վնասի հատուցման իրավունք, նյութական և ոչ նյութական վնաս, առաջնային և երկրորդային իրավունք:*

Առավել ընդհանրական կերպով վնասը բնորոշվում է, որպես պետության, կազմակերպությունների և քաղաքացիների օրենքով պահպանվող իրավունքների, շահերի ոստահարման կամ խախտման հետևանք<sup>1</sup>: Տարբերակվում են վնասի երկու տեսակ՝ նյութական և ոչ նյութական: Նյութական վնասը այն վնասն է, որը կարելի է հաշվել, իսկ ոչ նյութականը՝ հաշվելն անհնար է<sup>2</sup>: Ոչ նյութական վնասը իր մեջ ներառում է ցավի և տանջանքի արդյունքում կրած վնասը (բարոյական վնաս), ինչպես նաև գեղեցկության կամ տեսքի կորուստը (loss of amenity)<sup>3</sup>:

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասում<sup>4</sup> ամրագրված վնասի հատուցման հիմնական իրավունքը սահմանող նորմն անձանց համար երաշխավորում է հանրային իշխանության սուբյեկտների կողմից նրանց իրավունքների և օրինական շահերի խախտման հետևանքով կրած գրկանքների, կորուստների, այսինքն՝ պատճառված վնասի դիմաց փոխհատուցման ստացումը: Օրենքով հատուկ սահմանված դեպքերում անձինք կարող են ակնկալել, նաև ստանալ, փոխհատուցում՝ իրավաչափ վարչարարության հետևանքով ծագած վնասի դիմաց:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի վերլուծությունից հետևում է, որ հանրային իշխանության հիմնական պարտականությունն է՝ իր գործունեության ընթացքում չխախտել անձանց իրավունքները, ազատությունները և օրինական շահերը: Բոլոր այն դեպքերում, երբ, այնուամենայնիվ, նման խախտումներ արձանագրվում են, հանրային իշխանությունը պարտավոր է ապահովել իր կողմից խախտված իրավունքների պաշտպանությունը՝ վերականգնել դրանք ի թիվս այլոց խախտմամբ պատճառված վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու միջոցով:

տուցում տրամադրելու միջոցով:

Ինչպես հայտնի է սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության եղանակների տակ հասկացվում են օրենքով ամրագրված հարկադրական բնույթի նյութաիրավական միջոցները, որոնց կիրառմամբ իրականացվում է խախտված իրավունքների վերականգնումը և ներգործությունը իրավախախտի վրա<sup>5</sup>:

Իրավունքի խախտման փաստն արձանագրված լինելու դեպքում դրանց պաշտպանությունը, դեպքերի գերակշիռ մասում, կարող է իրականացվել՝ մինչև խախտումը եղած իրավիճակը վերականգնելու, իրավունքը խախտող գործողությունները դադարեցնելու և/կամ խախտմանը համարժեք հատուցում տրամադրելու միջոցով:

Մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելը կամ իրավունքը խախտող գործողությունները դադարեցնելը, հաճախ բավարար չեն սուբյեկտիվ իրավունքը վերականգնված դիտելու համար, քանի որ պաշտպանության այս միջոցները հաշվի չեն առնում, խախտմամբ պայմանավորված, դրանից բխող բացասական հետևանքները, որոնք իրավունքի վերականգնումն արդյունավետ կերպով ապահովելու համար նույնպես պետք է վերացվեն: Հնարավոր չէ հետադարձ կարգով հասնել մի իրավիճակի, երբ սուբյեկտիվ իրավունքի արդեն իսկ տեղի ունեցած խախտման հետևանքով կրած գրկանքները և կորուստները (վնասը) վրա հասած չլինեն, այդ իսկ պատճառով խախտված իրավունքն արդյունավետորեն կարող է պաշտպանվել խախտման դիմաց արժանապատիվ փոխհատուցում տրամադրելու միջոցով:

Վնասի հատուցումն ավանդաբար դիտվել է որպես սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության միջոց, որի կիրառումը պետք է ապահովի սուբյեկ-

www.aradaradutyjournal.com

տիվ իրավունքի խախտման պատճառով կրած զրկանքների և կորուստների դիմաց համարժեք հատուցում ստանալը, ինչն էլ, մյուս միջոցների հետ համակցության մեջ՝ կհամարվի բավարար պայման խախտված իրավունքը վերականգնված դիտարկելու համար:

Այս համատեքստում հարկ է առանձնացնել ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր սովյալ անձից:

Արդեն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 3-րդ մասի՝ համաձայն, եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար):

Այսպիսով, սահմանադրի կողմից առաջադրած կարգավորումից հետևում է, որ ապօրինի դատապարտված անձի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը նոր կամ նոր երևան եկած հանգամանքների ուժով վերացնելը, նոր դատական ակտ կայացնելը և դրանով իսկ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելը բավարար չէ անձի խախտված սուբյեկտիվ իրավունքն ամբողջությամբ վերականգնված համարելու համար սահմանադիրը պահանջում է նաև սուբյեկտիվ իրավունքը խախտելու հետևանքով ծագած ոչ նյութական վնասի (սույն դեպքում ապօրինի դատապարտման պատճառով կրած զրկանքների) դիմաց անձին տրամադրել օրենքին համապատասխան հատուցում: Անհրաժեշտ է նաև հստակ արձանագրել, որ այս հատուցումը պետք է տրամադրվի հենց ապօրինի դատապարտման դիմաց՝ անկախ դրա հետևանքով անձի կրած գույքային վնասի (որը նույնպես մտնում է ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների շրջանակի մեջ) հատուցումից:

Վնասի հատուցման իրավունքը, հանդիսանա-

լով խախտված իրավունքի պաշտպանության միջոց, գտնվում է համակարգային կապի մեջ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության միջոցներ ունենալու իրավունքի հետ, հետևաբար՝ խնդրո առարկա սուբյեկտիվ իրավունքի բովանդակության բացահայտման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հիշատակված կապի վերհանումը:

Անհրաժեշտ է բացահայտել՝ արդյոք վնասի հատուցման սահմանադրական իրավունքը ծագում է միայն այն դեպքում, երբ մեկ այլ հիմնական իրավունքի խախտման և դրա հետևանքով զրկանքներ կրելու փաստն ապացուցված է, թե սահմանադրաիրավական տեսանկյունից վնասի հատուցման իրավունքը հանդիսանում է սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու հնարավորության մասնավոր դրսևորում՝ ուրեմն այն ինքնուրույն հիմնական իրավունք է: Այդ իսկ պատճառով՝ գտնում ենք, որ վնասի հատուցման սահմանադրական իրավունքի էության վերհանման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև այդ սուբյեկտիվ իրավունքի հիմնարար կամ երկրորդային (ածանցյալ) բնույթ ունենալու հարցի պարզաբանումը:

Ածանցյալ պետք է համարվեն այն իրավունքները, որոնց խախտումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ վաղօրոք տեղի է ունեցել մեկ այլ իրավունքի խախտում, այսինքն՝ առաջինի խախտումը արձանագրելու նախապայմաններից է երկրորդի խախտման փաստի արձանագրումը:

Հիմնարար բնույթ ունեցող սուբյեկտիվ իրավունքը կարող է դիտարկվել խախտված՝ անկախ մեկ այլ սուբյեկտիվ իրավունքի խախտումն արդեն իսկ արձանագրված լինելու հանգամանքից:

Առաջին մոտեցումից բխում է, որ վնասի հատուցման սահմանադրական իրավունքը կարող է ծագել միայն այն պայմանով, որ խախտված լինի հիմնական մեկ այլ իրավունք: Սկզբում պետք է արձանագրվի որևէ իրավունքի խախտում, ինչից հետո էլ պետք է ծագի այդպիսի խախտման պատճառով առաջացած զրկանքների և կորուստների դիմաց փոխհատուցում պահանջելու հնարավորությունը: Չկա որևէ հիմնական իրավունքի խախտում, ուրեմն վնասի հատուցման իրավունք անձը չունի, հետևաբար՝ այդ իրավունքն որևէ կերպ խախտվել չի կարող:

Այս մոտեցումն իր արտահայտությունն է գտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածում, որը կարգավորում է հանրային իշխանության գործունեության ընթացքում անձանց պատճառ-

www.ardaradutyjournal.com

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված հարցերը:

Հիշատակված հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես սույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ, խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, կամ քրեական հետապնդում չիրականացնելու, կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած՝ չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ ներկայացված նորնը սահմանում է ոչ նյութական վնասի հատուցման պահանջով դատարան հայց ներկայացնելու ժամկետները, սակայն այն պատասխանում է շատ ավելի լայն շրջանակի հարցերի:

Նշենք, որ դատարան դիմելու ժամկետը օրենսդրի կողմից նախատեսված այն ժամանակահատվածն է, որի սահմաններում խախտված նյութական իրավունքը կարող է վերականգնվել հարկադրաբար: Հետևաբար՝ նշված ժամկետի հոսքի համար մեկնարկային կետ է հանդիսանում հենց նյութական իրավունքի խախտման պահը, որից հետո էլ միայն իրավագոր անձը ձեռք է բերում իր իրավունքների հարկադիր պաշտպանություն ստանալու (առարկայական) իրավունքը: Հայցային վաղեմության ժամկետը չի կարող ծագել ավելի շուտ, քան տեղի կունենա այն իրավունքի խախտումը, որի հարկադիր պաշտպանության համար անձը դիմել է դատարան: Չկա խախտում, ուրեմն չկա իրավախախտի նկատմամբ նյութական պահանջի իրավունք, հետևաբար՝ չկա այդ պահանջի հարկադիր իրականացման խնդրանքով դատարանին դիմելու ժամկետի հայցային վաղեմության, հոսքի մեկնարկ:

Ոչ նյութական վնասի հատուցման պահանջով հայցային վաղեմության ժամկետի մեկնակետը հիմնական իրավունքի խախտման փաստը ճանաչող իրավական ակտի ուժի մեջ մտնելու հետ կապելով՝ օրենսդիրը ամրագրել է այն մոտեցումը, որ վնասի հատուցման իրավունքը ունի երկրորդային բնույթ և դրա ծագումը պայմանավորված է միայն այլ հիմնական իրավունքի խախտման փաստով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ

հոդվածի 9-րդ մասի կարգավորումներից հետևում է, որ անձը պատճառված վնասի դիմաց դատական կարգով հատուցում պահանջելու իրավունք է ձեռք բերում հետևյալ նախապայմանների առկայության պարագայում.

ա) Իր իրավունքի խախտումը հաստատող անհատական իրավական ակտը մտել է օրինական ուժի մեջ և դարձել անբողոքարկելի: Նշված ակտով էլ հենց հաստատվում է հանրային իշխանության մարմինների կամ պաշտոնատար անձանց գործողությունների, կամ դրսևորած անգործության ոչ իրավաչափ լինելը և անձի իրավունքի խախտման փաստը:

բ) Վնասի հատուցման պահանջի հետ միասին ներկայացվում է նաև իրավունքի խախտումը ճանաչելու պահանջ՝ ենթադրյալ խախտման մասին իմանալու պահից մեկ տարվա ընթացքում:

Եթե անձը դատարան դիմի միայն ոչ նյութական վնասի հատուցման պահանջով, դատարանը պարտավոր կլինի կայացնել հայցադիմումը վարույթ ընդունել մերժելու մասին որոշում՝ գործը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով. այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ վնասի հատուցման պահանջ ներկայացնելու նախապայմաններից է միաժամանակ նաև իրավունքի խախտման փաստը ճանաչելու մասին պահանջի ներկայացումը:

Սա նշանակում է, որ վնասի հատուցման պահանջի շրջանակներում դատարանը չի կարող քննարկել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների իրավաչափության հարցը՝ չնայած նրան, որ իրավախախտման առկայությունն ավանդաբար հանդիսանում է վնասի հատուցման պահանջի բավարարման չորս նախապայմաններից մեկը:

Այսպիսով՝ վնասի հատուցման իրավունքը կարող է գործել (իրացվել) միայն այն դեպքում, երբ նախօրոք առկա է հանրային իշխանության սուբյեկտի կողմից անձի իրավունքը խախտելը հաստատող օրինական ուժ ունեցող իրավական ակտ կամ այդ հարցը որպես հիմնական պահանջ պետք է լուծվի դրանից ածանցյալ՝ վնասի հատուցման պահանջի հետ գուգահեռ:

Երկրորդ մոտեցման համաձայն՝ վնասի հատուցման իրավունքն ինքնին ունի հիմնարար բնույթ, և այդ իրավունքին հակադրվում է պետության պոզիտիվ պարտականությունը, ներպետական մակարդակում խախտված իրավունքների վերականգնման համար անձանց տրամադրել արդյունավետ միջոցներ, ինչը, տվյալ դեպքում, արտահայտվում է պատճառված վնասի դիմաց հատու-

ցում ստանալու հնարավորության երաշխավորմամբ<sup>8</sup>։ Վնասի հատուցման իրավունքը վերաբերում է պետության կողմից ներպետական մակարդակում այնպիսի իրավական գործընթացի երաշխավորմանը, որի արդյունքում անձը հնարավորություն կունենա արդյունավետորեն վերականգնել իր խախտված իրավունքները։ Այլ կերպ՝ վնասի հատուցման իրավունքն անձի սեփական իրավունքները և ազատությունները արդյունավետ կերպով վերականգնելու հնարավորության մասնավոր դրսևորում է։ Այս իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է կրած զրկանքների և կորուստների հետևանքով պատճառված վնասի դիմաց փոխհատուցման տրամադրման եղանակով/տեսքով իրավունքի պաշտպանության անհրաժեշտ և արդյունավետ միջոցից օգտվելու ինստիտուցիոնալ պայմանների ապահովմանը, ինչը կարող է անձի համար օբյեկտիվորեն երաշխավորել ցանկալի արդյունքի ստացում։ Այս դեպքում հիմնական այլ իրավունքների խախտման հանգամանքը չի համարվում վնասի հատուցման սահմանադրական իրավունքի խախտման փաստը արձանագրելու համար պարտադիր նախապայման։

Այս մոտեցման համաձայն՝ վնասի հատուցման իրավունքն ավելի լայն բովանդակություն ունի, քան գուտ խախտմամբ պատճառված վնասի դիմաց արտապայմանագրային պարտավորական իրավահարաբերություններից բխող փոխհատուցման պահանջի իրավունք ունենալը. այս իրավունքին հակադրվում է պետության պոզիտիվ պարտականությունը թե՛ օրենսդրորեն, թե՛ փաստացի անձի համար ապահովում է այնպիսի գործիքակազմ, որի կիրառմամբ վերջինս կկարողանա, իրեն պատճառված վնասի փոխհատուցման եղանակով, հասնել իր խախտված իրավունքների վերականգնմանը։ Եթե անգամ օրենսդրորեն ամրագրվի վնասի հատուցման իրավունքը, սակայն, անձը, ոչ իր մեղքով, փաստացի չկարողանա հանրային իշխանության մարմիններից ստանալ իրեն պատճառված վնասի հատուցումը, ապա այս դեպքում նույնպես վնասի հատուցման սահմանադրական իրավունքը կհամարվի խախտված։

Այսպիսով, քննարկման առարկա հանդիսացող իրավունքի վերաբերյալ առկա են երկու հետևյալ մոտեցումները.

Առաջին, եթե վնասի հատուցման իրավունքը դիտարկենք փոխհատուցում պահանջելու՝ պետական հարկադրանքով պաշտպանված հնարավորություն, ապա այն ծագում է միայն մեկ այլ հիմնական իրավունքի խախտման դեպքում։ Իր հեր-

թին, վնասի հատուցման իրավունքի խախտում արձանագրելու համար անհրաժեշտ կլինի ի սկզբանե հիմնավորել մեկ այլ սուբյեկտիվ իրավունքի խախտման փաստ, որի ուժով էլ անձը պետք է ձեռք բերի նյութաիրավական պահանջի հնարավորություն։

Երկրորդ, եթե վնասի հատուցման իրավունքը դիտարկենք, որպես սահմանադրի կողմից պետության վրա դրված պոզիտիվ պարտականություն՝ անձանց համար ներպետական մակարդակում ապահովելով պաշտպանության այնպիսի միջոցից օգտվելու հնարավորություն, որը փաստացի կարող է երաշխավորել սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի խախտման պատճառով կրած զրկանքների և կորուստների դիմաց փոխհատուցում ստանալը, ապա այդ դեպքում վնասի հատուցման իրավունքը կհանդիսանա ինքնուրույն հիմնական իրավունք, որի խախտումը կարող է արձանագրվել առանց մեկ այլ հիմնական իրավունքի կամ օրինական շահի խախտման փաստը հաստատելու անհրաժեշտության։

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, ըստ որի՝ հիմնական իրավունքները մեկնաբանելիս հաշվի են առնվում նաև ՀՀ վավերացրած միջազգագային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան՝ վնասի հատուցման իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման առումով կարևոր նշանակություն ունի նաև հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԵԵԴ) պրակտիկայի վերհանումը։

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում, սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք։

Կոնվենցիայի նախապատրաստական աշխատանքներից (travaux préparatoires) հետևում է, որ 13-րդ հոդվածի ներդրման նպատակն անձանց այնպիսի իրավական միջոցների (գործիքների) տրամադրումն է եղել, որոնց կիրարկմամբ հնարավոր է վերականգնել վերջիններիս խախտված իրավունքները ներպետական մակարդակում՝ մինչև Կոնվենցիայով սահմանված վերահսկող ատյաններից դիմելը<sup>9</sup>։

Այսպիսով՝ հիշատակված կոնվենցիոն նորմը

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պահանջում է ներպետական մակարդակում անձանց համար ստեղծել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք ի գործու են երաշխավորել կոնվենցիոն իրավունքների կյանքի կոչումը և դրանց վերականգնումը:

Պայմանավորվող կողմերի՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված պոզիտիվ պարտականության շրջանակները կախված են ենթադրաբար խախտված իրավունքի բնույթից, իսկ հիշատակված հոդվածից բխող պարտավարությունները ապահովելու եղանակների ընտրության հարցում պետություններն օժտված են որոշակի ինքնավարությամբ: Ամեն դեպքում, քննարկվող նորմով պահանջվող պաշտպանության միջոցները պետք է լինեն արդյունավետ ինչպես օրենսդրական մակարդակում, այնպես էլ՝ փաստացի<sup>10</sup>:

Ինչպես վերև արդեն հիմնավորվել է հանրային իշխանության սուբյեկտների կողմից անձանց իրավունքների և ազատությունների (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված հիմնական իրավունքների) խախտման հետևանքով կրած գրկանքների և կորուստների վերաբերյալ՝ պատճառված վնասի դիմաց հատուցում ստանալը հանդիսանում է խախտված իրավունքների պաշտպանության (վերականգնման) միջոցներից մեկը, հետևաբար՝ այն ընդգրկվում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի կարգավորումների շրջանակի մեջ: Սա իր հերթին նշանակում է, որ ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վերաբերյալ ՄԻԵԴ-ի ձևավորած պրակտիկան:

Սիլվերն ընդդեմ Միացյալ Թագավորություն գործով 1983 թվականի մարտի 23-ին կայացված վճռով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ներպետական մակարդակում իրավունքի պաշտպանության միջոց ունենալն ենթադրում է ինչպես պատկան մարմնի կողմից անձի ներկայացրած պահանջի որոշումը (determination of a claim), այնպես էլ այդ պահանջի իրավաչափ լինելու դեպքում խախտված իրավունքի վերականգնման տրամադրումը<sup>11</sup>:

Քինանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2001 թվականի ապրիլի 03-ին կայացված վճռով Եվրոպական դատարանը նշել է հետևյալը.

«... հարց է ծագում՝ արդյո՞ք 13-րդ հոդվածը այս համատեքստում պահանջում է, որ փոխհատուցումը լինի հասանելի: ... դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի հիմնարար դրույթներ դիտարկող 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման դեպքում դրանից բխող ոչ նյութական վնասի դիմաց հատուցման տրամադրումը պետք է լինի հասանելի՝ որպես

իրավունքի պաշտպանության հնարավոր միջոցների շրջանակի մի մաս:

Դատարանն այս գործով եզրակացնում է, որ բողոքաբերը պետք է իրեն, իսկ մինչև իր որդու մահը նաև վերջինիս, պատճառված ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցման պահանջ ներկայացնելու հնարավորություն ունենա:»<sup>12</sup>:

Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հուլիսի 12-ի վճռով Եվրոպական դատարանը նույնպես անդրադարձել է հանրային իշխանության գործունեության ընթացքում պատճառված վնասի հատուցման հիմնահարցերին:

ՄԻԵԴ-ը նշված գործով արձանագրել է հետևյալը.

«... 43. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի մեկ այլ դրույթի փաստացի խախտման առկայությունը չի կարող հանդիսանալ որպես 13-րդ հոդվածի կիրառման նախապայման: 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական մակարդակում իրավունքի պաշտպանության այնպիսի միջոցի հասանելիությունը, որն ունակ է կենսագործելու Կոնվենցիայի իրավունքների և ազատությունների բովանդակությունը՝ անկախ ազգային իրավական համակարգում դրանց ամրագրման ձևից: Հետևաբար՝ 13-րդ հոդվածի կիրառման համար անձին բավարար է ունենալ Կոնվենցիայի իմաստով վիճելի պահանջ:

44. Դատարանը նշում է, որ ոստիկանների կողմից դիմումատուին ցուցաբերած վատ վերաբերմունքի փաստը միանշանակ հաստատվել է ազգային դատարանների, այն է՝ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. հունիսի 15-ի դատավճռով, որով դատապարտվել են գործով անցնող երկու ոստիկանները:

45. ...դիմումատուն առանձին դատավարական կարգով ներկայացրել է փոխհատուցման քաղաքացիական հայց, այդ թվում՝ նաև վատ վերաբերմունքի համար...:

Այնուամենայնիվ, ոչ նյութական վնասի հատուցում դիմումատուին չի տրվել, քանի որ փոխհատուցման այդ տեսակը նախատեսված չի եղել ազգային օրենսդրությամբ:

46. Հետևաբար՝ հարց է առաջանում, թե արդյո՞ք այս համատեքստում 13-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի տրամադրվի նման փոխհատուցում: Դատարանն, իր հերթին, որոշ գործերով արդարացի փոխհատուցում է շնորհում՝ ճանաչելով ցավը, սթրեսը, անհանգստությունը և հիասթափությունը որպես ոչ նյութական վնասի փոխհատուցման տրամադրման հիմք: Դատարանը նախկինում

վճռել է, որ Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթների՝ 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման հետևանքով առաջ եկող ոչ նյութական վնասի փոխհատուցումը սկզբունքորեն պետք է հասանելի լինի հնարավոր պաշտպանության միջոցների շարքում:

47. Տվյալ գործով Ռատարանը գալիս է այն եզրակացության, որ դիմումատուն պետք է հնարավորություն ունենար դիմելու վատ վերաբերմունքի հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցմանը: Եվ, քանի որ Հայաստանի օրենսդրությունը նման փոխհատուցում չի տրամադրում, ուստի դիմումատուն գրկված է եղել արդյունավետ պաշտպանության միջոցից:

48. Հետևաբար՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:<sup>13</sup> :

Այս վճռից կարելի է հստակ եզրակացնել, որ ներպետական մակարդակում հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման հնարավորություն ունենալը դիտվում է, որպես իրավունքի պաշտպանության միջոց ունենալու, այլ ոչ ընդամենն իրավախախտի նկատմամբ ձևավորված նյութաիրավական պահանջի իրավունք:

Իրավունքի պաշտպանության միջոց ունենալը հանգում է խախտված իրավունքների վերականգնմանը հասնելու փաստացի հնարավորության ապահովմանը: Ներպետական մակարդակում այդ հնարավորությունը պետք է տրամադրվի վիճելի ցանկացած պահանջի դեպքում՝ անկախ իրավունքի խախտման փաստը հաստատված լինելու հանգամանքից:

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝ եթե ՄԻԵԳ-ը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա ՄԻԵԳ-ը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

Այս նորմը ևս մեկ անգամ գալիս է փաստելու, որ հանրային իշխանության կողմից կոնվենցիոն իրավունքների խախտման դեպքում դրանց պաշտպանության միջոցներից մեկն է հանդիսանում այդպիսի խախտմամբ պատճառված վնասի հատուցումը, հետևաբար՝ անձինք այդպիսի դեպքերում պետք է օժտված լինեն փոխհատուցում ստանալու հնարավորությունից:

Հիշատակված նորմից հետևում է, որ ՄԻԵԳ-ն ինքը կարող է փոխհատուցում տրամադրել տու-

ժած կողմին միայն այն դեպքում, երբ պետությունը ձախողել է ազգային մակարդակում նրան տրամադրել պաշտպանության անհրաժեշտ այնպիսի միջոցներ, որոնք բավարար կլինեին արդյունավետ կերպով խախտված իրավունքը վերականգնելու համար:

Կոնվենցիան և դրա հիմքի վրա ստեղծված դատարանը, իրենց իրավապաշտպան առաքելությունն իրականացնելիս, առաջնորդվում են դատարանի սուբսիդիարության սկզբունքով: Սա նշանակում է, որ հիմնական, որոշիչ օղակը, որից առաջին հերթին կախված է մարդու իրավունքների պաշտպանությունը, հանդիսանում է ազգային դատարանը, որը օժտված է անմիջականորեն պետության ներսում ծագած և ազգային իրավունքի համակարգի պայմաններին և ավանդույթներին համապատասխան ձևավորված ներպետական իրավունքի նորմերով կարգավորվող խնդիրները քննելու և լուծելու առավել մեծ իրավասությամբ: Կոնվենցիայի 13-րդ հոդվածը ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ Եվրոպական դատարանը պահպանում է ազգային մակարդակում իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցների առկայության նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավունքը: Եվրոպական դատարանի միջամտությունն անհրաժեշտ և հնարավոր է միայն այն դեպքում, երբ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցների համակարգը բացակայում է կամ փաստացի չի իրացվում<sup>14</sup> :

Վերը նշվածից արդեն պարզ է դառնում Կոնվենցիայի 13-րդ և 41-րդ հոդվածների միջև առկա համակարգային կապը. 13-րդ հոդվածը պարտավորեցնում է պետությանն ազգային մակարդակում ապահովել անձանց խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը (մասնավորապես հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցումը), իսկ 41-րդ հոդվածը նախատեսում է դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող կարգավորումը, ըստ որի՝ եթե պետությունը ձախողում է 13-րդ հոդվածով նախատեսված իր պոզիտիվ պարտականության կատարումը, ապա Կոնվենցիայով նախատեսված մարմինները սեփական գործողություններով են վերականգնում տուժած կողմի իրավունքները:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ՀՀ Սահմանադրության մեջ հանրային իշխանության կրողների գործողությունների կամ թույլ տված անգործության հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավունքի սահմանումը բխում է նաև ազգային մակարդակում վերջիններիս կողմից անձանց խախտված կոնվենցիոն իրավունքներն արդ-

www.ardaradutyjournal.com

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յունավետ կերպով վերականգնելու Հայաստանի Հանրապետության կոնվենցիայով ստանձնած պոզիտիվ պարտականությունից:

Հաշվի առնելով ՄԻԵԴ պրակտիկան՝ գտնում ենք, որ մայր օրենքի 62-րդ հոդվածով ամրագրված վնասի հատուցման իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունն առավել ընդգրկուն կերպով բացահայտում է քննարկվող հարցի վերաբերյալ վերը հիշատակված երկրորդ մոտեցումը: Վնասի հատուցման սահմանադրական իրավունքի բովանդակությունը ավելի լայն է և իր մեջ կլանում է այն մոտեցումը, ըստ որի՝ քննարկվող իրավունքը հանգում է իրավախախտի նկատմամբ փոխհատուցում վճարելու վերաբերյալ նյութաիրավական պահանջ ունենալուն:

Ամփոփելով ասվածը՝ արձանագրենք, որ վնասի հատուցման իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ ի հակադրումն այս իրավունքի՝ պետության վրա դրվում է պոզիտիվ պարտականություն՝ ստեղծել ներպետական մակարդակում նյութաիրավական և վարուբային բնույթի այնպիսի մեխանիզմներ, որոնց կիրառումը ողջամտորեն կարող է և պետք է անձանց համար ապահովի պատճառված վնասի դիմաց հատուցման ստացումը: ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածով նախատեսված վնասի հատուցման իրավունքը վերաբերում է անձի համար իրավունքի պաշտպանության համապատասխան միջոցի հասանելիությանը:

<sup>1</sup> Н.С. Малейн Возмещение вреда, причиненного личности. М. 1965, С. 5.

<sup>2</sup> Գրիգոր Բերմեզյան «Արտապայմանագրային հարաբերություններ», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջ 14:

<sup>3</sup> Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche. "Tort law", Oxford and Portland, Oregon, Hart Publishing, 2000., p. 20.

<sup>4</sup> 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն (http://www.irtek.am/views/act.aspx?aid=150151)

<sup>5</sup> Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого/ Гражданское право: Том 1 Учебник. Издание пятое, переработанное и дополненное.-- "ПБЮМ Л.В Рожников", Москва 2000 г, С. 295.

<sup>6</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին) (http://www.irtek.am/views/act.aspx?aid=150151)

<sup>7</sup> Agbor AA "Pursuing the Right to an Effective Remedy for Human Rights Violation in Cameroon: The Need for Legislative Reform" PER / PELJ 2017(20) - DOI http://dx.doi.org/10.17159/1727-3781/2017/v20i0a1764, p. 10.

<sup>8</sup> Jacobs, White, and Ovey, 2010. The European Convention on Human Rights. 5th edition. New York: Oxford University Press, p. 131-132.

<sup>9</sup> Pieter van Dijk, Fried van Hoof, Arjen van Rijn and Leo Zwaak (eds.), Theory and Practice of the European Convention on Human Rights. 4th edition. Antwerpen-Oxford: Intersentia, 2006, p.999.

<sup>10</sup> Jacobs, White, and Ovey, 2010. The European Convention on Human Rights. 5th edition. New York: Oxford University Press, p. 135.

<sup>11</sup> Silver and others v United Kingdom, ECHR, 25 March 1983, para 113, Series A No 61.

<sup>12</sup> Keenan v United Kingdom, no. 27229/95 para 130-131, ECHR 2001-III.

<sup>13</sup> Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի, no. 22999/06, para 43-48, ECHR 2012.

<sup>14</sup> Под общ. Ред. д. ю. н., проф. В.А. Туманова и д. ю. н., проф. Л.М. Эгина. /Комментарии к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения -- Издательство НОРМА, Москва, 2002 год, С. 205.

#### *Օգտագործված գրականության ցանկ*

1. Н.С. Малейн Возмещение вреда, причиненного личности. М. 1965.
2. Գրիգոր Բերմեզյան «Արտապայմանագրային հարաբերություններ»; Երևան, ԵՊՀ հրատարակչություն; 2009 թվական:
3. Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche .Tort law, Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000., p.20.
4. 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն (http://www.irtek.am/views/act.aspx?aid=150151).
5. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого/ Гражданское право: Том 1 Учебник. Издание пятое, переработанное и дополненное. -- "ПБЮМ Л.В Рожников", Москва 2000 г, ст. 295.

6. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին) (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=150151>)

7. Agbor AA “Pursuing the Right to an Effective Remedy for Human Rights Violation in Cameroon: The Need for Legislative Reform” PER / PELJ 2017(20) - DOI <http://dx.doi.org/10.17159/1727-3781/2017/v20i0a1764>, page 10. /Accessed 11.06.2018/.

8. Jacobs, White, and Ovey, 2010. The European Convention on Human Rights. 5th edition. New York: Oxford University Press.

9. Pieter van Dijk, Fried van Hoof, Arjen van Rijn and Leo Zwaak (eds.), Theory and Practice of the European Convention on Human Rights. 4th edition. Antwerpen-Oxford: Intersentia, 2006, p.999.

10. Silver and others v United Kingdom, ECHR, 25 March 1983, para 113, Series A No 61.

11. Keenan v United Kingdom, no. 27229/95 para 130-131, ECHR 2001-III.

12. Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի, no. 22999/06, para 43-48, ECHR 2012.

13. Под общ. Ред. д. ю. н ., проф. В.А. Туманова и д. ю. н ., проф. Л.М. Эгина . / Комментарии к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения -- Издательство НОРМА, Москва, 2002.

**Արման Գրիգորյան**  
 Аспирант кафедры юриспруденции  
 Европейского университета

**РЕЗЮМЕ**

*Проблемы конституционно-правового содержания основного права на возмещение вреда*

Эта статья посвящена конституционному праву на возмещение вреда. В статье была предпринята попытка выявить конституционно-правовое содержание данного основного права и представить правовую связь возникающую из него между публичной властью и лицами, учитывая также соответствующую практику Европейского Суда по правам человека.

*Ключевые слова:* право на средства защиты, право на возмещение вреда, материальный и нематериальный ущерб, первичные и второстепенные права.

**Arman Grigoryan**  
 PhD student of the chair of law  
 of the European University

**SUMMARY**

*The issues of constitutional-legal content of the basic right to compensation*

This article refers to the constitutional right to compensation for damages. An attempt was made to disclose the constitutional-legal content of this fundamental right and present the legal bond between public power and individuals arising from it, taking into consideration the practice of the European Court of Human Rights concerning the abovementioned issue.

*Key words:* right to remedy, right to compensation, pecuniar and non-pecuniar damages, primary secondary rights.

Բնագիրը ներկայացվել է 15.06.2019թ.  
 Ընդունվել է տպագրության 09.07.2019թ.  
 Հոդվածը երաշխավորել է տպագրության իրավաբանական գիտությունների  
 թեկնածու, դոցենտ Թ.Շաքարյանը